Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկ

<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ-ի կողմից տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքն է, որը սպառողի վարկավորման ընդհանուր ծախսն է արտահայտված տրամադրված վարկի տարեկան տոկոսադրույքով և որն իր մեջ պարունակում է բոլոր տոկոսներն ու այլ վճարումները, որոնք սպառողը պարտավոր է վճարել վարկի ստացման, ինչպես նաև դրա գործողության ողջ ընթացքում ,

A –տրամադրվող վարկի պայմանագրային գումարն է,

n –սպառողի կողմից վարկի մարմանն ուղղված (վարկի մայր գումար, տոկոսագումարներ և /կամ այլ վճարումների գումարներ) վճարի (ներառյալ վարկի ստացման պահին կատարվող միջնորդավճարի) հերթական համարն է,

N –վարկի մարմանն ուղղվված վերջին վճարի (վարկի մայր գումար, տոկոսագումարներ և /կամ այլ վճարումների գումարներ) համարն է՝ ներառյալ նաև վարկի ստացման պահին կատարվող վճարը, որից հետո պարտավորությունները համարվում են մարված,

K_n- սպառողի կողմից վարկի ստացման պահին և/կամ վարկի գործողության ընթացքում կատարված հերթական՝ n-րդ վճարի գումարն է (մայր գումար, տոկոսագումարներ և/կամ այլ վճարումների գումարներ),

D_n-այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել վարկի ստացման օրից մինչև վարկի գումարի հերթական՝n-րդ մարման օրը ներառյալ: